# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ԻՆ/

02.05.2025թ.

2025թ ապրիլի 25-ին, ժամը 12:00-ին <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. Հ0-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին լսում) ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի՝ Շաքի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<Շինաքար 2>> ՍՊԸ ընկերության կողմից Գութանասարի անդեզիտաբազալտների հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նախաձեռնության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Հանրային քննարկումներին մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական ղեկավար Ռուբեն Մանուչարյանը, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ՝ Հայկ Քարամյանը, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արմեն Խաչատրյանը, <<Շինաքար 2>> ՍՊԸ-Ի տնօրեն՝ Փափագ Հակոբյանը, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

**Ելույթ ունեցան՝**

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արմեն Խաչատրյանը նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումները: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է, մենք շահագրգռված ենք, որ իրականացնեն նման գործունեություններ, որ որոշակի ընտանիքներ աշխատեն, բարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության նկարագրությունը ներկայացրեց <<Շինաքար 2>> ՍՊԸ-Ի տնօրեն՝ Փափագ Հակոբյանը: Ներկայացրեց նաև ՀՀ օրենսդրությունը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջները, նշեց որ նախկինում հանքավայրը շահագործվել է <<Շինաքար 2>> ՍՊԸ ընկերության կողմից:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Հնչեցին հարցեր կապված սոցիալական ծրագրերի, աշխատատեղերի վերաբերյալ, ընկերությունը հավաստեց, որ համայնքի հետ կքննարկվեն և կնախատեսվեն սոցիալական ծրագրեր, ինչպես նաև աշխատողները հնարավորինս կլինեն մոտակա բնակավայրից:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ <<Շինաքար 2>> ՍՊԸ ընկերության կողմից Գութանասարի անդեզիտաբազալտների հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նախաձեռնության վերաբերյալ աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ:

*Հանրային լսումների ամբողջ ընթացքը տեսաձայնագրվել է, որից հետո մասնակիցները ստորագրել են ի նշան հանրային լսմանը իրենց մասնակցության:*

Հանրային քննարկման պատասխանատու՝ Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝

Ա. Խաչատրյան

Արձանագրող՝ Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ՝

Հ.Քարամյան

Ձեռնարկող՝ <<Շինաքար 2>> ՍՊԸ ընկերության տնօրեն՝

Փ.Հակոբյան